րելով, ուղարկոեցաւ Հայաստան եւ այստեղ նահատակոեցաւ: Նոյն գաւառումն էր եւ սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանքը: Այստեղ էր պատմական Արտաղը, Աւարայրն, Տղմուտը, ուր հայոց քաջերը այնպէս եռանդով պատերազմեցին Յազկերտի եւ նրա մոգերի հետ կրօնքի ու հայրենիքի պաշտպանութեան համար: Վանայ ծովակի կղզիներումն էին՝ Լիմ, Կտուց եւ Աղթամարայ անապատները իրանց խստակեաց աբեղաներով: Հաղբակումն էր սուրբ Բարդուղիմէոս Առաքելոյ վանքը, որը սուրբ Թադէոսից յետոյ Հայաստան եկաւ եւ այնտեղ նահատակոեցաւ:

Վանքերը, ոչ միայն իբրեւ կենտրոն հայերի կրօնական կեանքի, պահպանում էին իրանց մէջ ազգի սրբութիւնները, այլեւ ամփոփում էին իրանց մէջ նախնեաց մտաւոր վաստակները, հին մագաղաթների վրայ, ժամանակակից դեղնած եւ գունատոած տառերով: Վանքերի մէջ դրած էին եւ շիրիմները հայոց մեծ մարդերի: Օրինակ՝ Աշտիշատայ եկեղեցին Մուշի մէջ կրում էր Սահակ Պարթեւի գերեզմանը, այն մեծ քահանայապետի, որ այնքան երկար տարիներ պատերազմելով պարսից արքունիքի եւ Բիւզանդիոնի խորամանկ քաղաքականութեան հետ, պահպանեց Արշակունիների այն ժամանակ խարխուլ գահը: Սուրբ Ղազարու կամ Առաքելոց վանքը, Մուշի մէջ, ունէր Մովսէս Խորենացու գերեզմանը, որը մտցրուց Հայաստան յունական գիտութիւնը, որ տոեց հայերին իրանց նախնեաց պատմութիւնը, որպէս Եհովայի Մովսէսը տոեց Իսրայէլին Հին Կտակարանը: Նոյն վանքումն էր Դաւթի, «Անյաղթ» փիլիսոփայի գերեզմանը, Խորենացու աշակերտակցի, որ նոյնպէս Աթէնքից բերաւ Հայաստան յունաց դպրութիւնը եւ սովորեցրուց հային իմաստասիրութիւն եւ առողջ մտածութիւն: Այնտեղ էին եւ Յովհան եւ Ղազար թարգմանիչների գերեզմանները: Վանքն Ոստանայ, Ռշտունեաց երկրում, ունէր Եղիշէի գերեզմանը, այն ոգելից բանաստեղծի, որ այնքան եղերական կերպով երգեց հայոց քաջերի նահատակութիւնը Աւարայրի դաշտում: Վանքն Նարեկայ ունէր Գրիգոր Նարեկացու գերեզմանը, որի գիրքը իւրաքանչիւր հայ մարդու սրտի սրբազան բուրվառն է, որով ծխում է նա իր ջերմ օրհներգութիւնը դէպի յաւիտենականի աթոռը: Հոգոց վանքը, Անձեւացեաց երկրում, ունէր Տրդատ մեծի գերեզմանը, այն հզօր թագաւորի, որ մտցրուց Հայաստանում Աւետարանի լոյսը: Վարագայ վանքը, Վանի մօտ, ունէր Սենեքերիմ Արծրունու գերեզմանը. այնտեղ էին դրած եւ Խոշոշ թագուհու եւ Պետրոս Գետադարձի գերեզմանները: Վանքն Կոփայ, Մուշի մօտ, ունէր Դանիէլ Երջանիկի, Լուսաւորիչի թոռան շիրիմը: Վանքը Բասէնու կամ Հասան-կալէի Գրիգոր մագիստրոսի գերեզմանը: Վանքն Խեկայ՝ Հայոց ձորում՝ Աբրահամ խոստովանողի գերեզմանը: Տարօնի սուրբ Կարապետի